

Իր այս պաշտօնավարութեանց միջոցին, Գրիգոր Եղիայ-
եան կ'կազմէ յարաբերութեանց և ծանօթութեանց ընդարձակ
շրջանակներ, շահելով եղիպատիւն և օտար պետական բարձր
անձնաւորութեանց համակրանքը: — Ունէր Պարսկական Շիրի
Խուրշիտ պատուանշանին կարմիր ժապուէնը, երկրորդ տա-
տիճանին կանանչ ժապուէնը, ինչպէս նաեւ Մէճիտիէի 3-րդ,
Օսմանիէի 2-րդ, Մօնտէնէօր Տանիէլօ պատուանշանին 3-րդ
աստիճանը, Շրվալիէ Տէլլ Բօսօնէ ա'ի թալիա, Ս. Սթանիւլաս
Ռուսական 3-րդ աստիճանն, ևւն. ևւն: Անդամ էր *Société
de Naufrage de Baltique et de la Société de Croix
Rouge de Russie* կազմակերպութեանց:

Իր Հիւպատոսական պաշտօնին առիթով էր անշուշտ որ
ընդունած էր Ռուսական Հարաստիութիւնը, քաղքենի (*Bour-
geois*) արձանագրուելով Օսեսա քաղաքի շրջանակին մէջ:

Եղիայեան իր դիրքի բարձրութիւններուն վրայ երբեք
չ'մոռցաւ իր ազգն ու հասարակութիւնը. Զուգայեցիի արիւ-
նը, զոր կ'ժառանգէր իր հօրմէն, և ազգային միջնորդի մը
տակ ստացած իր մաքուր նախակրթութիւնը անշեջ պահեցին
միշտ իր մէջ իր ազգին զգացումը, զոր Հ'կորմնցուց ընտւ,
հակառակ ու վաղուց կորմնցուցած էր իր մայրենի լեզուին
ծանօթութիւնը: Այնպէս որ երբ 1864-ին ընտրուեցաւ անդամ
առաջին Սահմանադրական Թաղ. Խորհրդոյ Ժողովի, սիրով
ընդունեց այդ պաշտօնը, նոյնպէս յետոյ յօժարութեամբ քա-
նիցս մասնակցեցաւ Թեմական Ժողովոյ և Քաղաքական Ժո-
ղովին, որուն ալ աստիճանեց 1905-1907-ին և Իսկ 1907-ին,
երբ կազմուեցաւ Հայ Բարեգործական Ընդհանուր միութիւնը,
անոր հիմնադիր անդամներէն մին եղաւ ինքն ալ:

Քաղ. Ժողովոյ Աստիճանութեան միջոցին, Առաջնոր-
դարանը մեծապէս օգտուեցաւ իր վարչական մարդու փոր-
ձառութենէն, ինքն էր որ կազմակերպական լուսադոյն անօրի-
նութիւններ ըրաւ այդ Հաստատութեան մէջ, մասնաւորապէս
վարչական Դիւանէն անջատել տալով Կալուսածոցը, զոր
առարկայ դարձուց յստուկ ուշադրութեան:

Դեռ քսանեւէնդամեայ, ամուսնացած էր Կ. Պոլսեցի
վնճառական Մենճիկեան Կարապետի դստեր Մարիդոյի հետ,
որմէ ունեցաւ միակ աղջիկ զաւակ մը, Հնազանդ, որ, 1864
Հոկտ. 24-ին, մեռաւ մետոսամեայ. 1888 Մայիս 30-ին,